ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«25» «օգոստոս» 2025 թվական № 323-Լ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 10-Ի N 130-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Շրջակա միջավայրի նախարարի 2023 թվականի ապրիլի 10-ի «Անազատ և կիսաազատ պայմաններում պահվող վայրի կենդանիների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիներ պահելու թույլտվության համար մասնագիտական եզրակացություն տրամադրող հանձնաժողով ստեղծելու, նրա անհատական կազմն ու աշխատակարգը հաստատելու մասին» N 130-Լ հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հրամանի Հավելված N1-ում «Տիգրան Գաբրիելյան» բառերը փոխարինել «Արամ Մեյմարյան» բառերով,

2) Հրամանի Հավելված N2-ի 9-րդ կետում՝ «Մասնագիտական հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ» բառերը փոխարինել «Շրջակա միջավայրի նախարարի, Մասնագիտական հանձնաժողովի նախագահի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի հանձնարարությամբ» բառերով:

Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

8/25/2025

X

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Երևան